345

1. Փառք ու պատիվ Քեզ, ո՛վ Հայր իմ Աստված,
Քո փառավոր շնորհքի համար,
Որդուդ արյունով ես Դու ինձ փրկել՝
Քո կամքի հաճության համար:

Փա՛ռք Քեզ, ի՛մ Հայր, փա՛ռք Քեզ, Որդի՛,
Եվ փառք Քեզ, օրհնյալ Սուրբ Հոգի:

2. Վեհ սիրուդ համար օրհնում եմ Քեզ, Տե՛ր,
Որ խաչի վրա մեզ ցույց տվիր,
Երկնքից իջար, մեղքերս քավեցիր,
Մեզ համար անձդ զոհեցիր:

3. Փառք Քո զորությանն, օրհնյալ Սուրբ Հոգի,
Որով իմ կյանքը փոխեցիր:
Վերստին ծնունդ ինձ պարգևելով՝
Իմ սրտի մեջ բնակվեցիր:

4. Գովքդ երգում եմ, քանզի բարի ես
Քո բոլոր սուրբերի համար
Եվ ոչ մի բարիք Դու չես խնայում,
Տե՛ր, Քեզ սիրողների համար:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025